

2. — Մատաղ: — Հարկ չկայ յիշեցընելու ընթերցողացս՝ որ ընթերցուածոց մեկնչին յիշատակած գատկական մտերը սովորաբար օրննուած են կամ պատարագեալք. այս ինքն մատաղ եղած՝ ամէն տեսակ ընտանի սուրբ կենդանիներէն: Մանաւանդ թէ այս օրուան մատաղներն աւելի բազմաթիւ եւ ընդհանուր են այդ ժամանակ եւ յետոյ եւս, իբր չորս դար վերջ դեռ ըսել տալու համար Տարօնացւոյն՝ թէ «ի գատկին ամենայն ազգս Հայոց (անոցմէ) մատուցանեն ի յիշատակ նեչեցեոցն», եւ աղքատաց կը բաշխեն (Թէոփ. 282): Ուրեմն գատկի հին ազգալը հոգեհանգստեան վերածուած է հող: Ծնորհալուոյ դարուն ալ կը պատահինք այդ օր «անբանից կենդանեաց զենմանց» (Բնդհ. 154), եւ մեծն Լեւոն նոյն տօնը կը փառաւորէ «մեծահանդէս ժողովով եւ մեծածախ սեղանով» (Հյստ. 438). բայց այս վկայութեանց մէջ հոգեհացի սեղմ իմաստը նշմարելի չէ:

Սակայն սոյն զենմանց մէջ ամենէն ուշագրաւն ու տօնին յայտարարն է «գատկական գառն», որուն կը հանդիպինք նախ Արշարունեաց եպիսկոպոսին վերոյիշեալ տեղւոյն մէջ, ուր կը շեշտէ անասնոյս քան զայլս կարեւորութիւնն՝ ըսելով. «Կերիցես զգատիկ Տեառն, գառն՝ որ բառնայ ըզ-